Օրինակ նամակ կառապետութեան։

## ԳԼՈՒԽ ԿԸ.

Տեսանելով մեր ընդունելութիւն ժողովրդեան յաշխարհէն սունեաց և թուղթ փոխանորդութեան նոցայ ընդ քեզ, և 'ի վերայ երդման քոյ հաստատեցաք 'ի միտս մեր հաւատարիմ քոյ լինիլ տանն հայոց, տուաք քեզ նամակ շնորհաց և պաշտօնի ամենայն կառապետութեան ժամանակաւ երիս ամաւ, զի դու Տեառն Պօղոսդ երբնճակայ իշխեսցես 'ի վերայ ամենայն կառ յօրինող արհեստաւորաց, և զգուշութեամբ արբունս հասուցանիցես ամենայն կառ զոր ինչ յօրինեսցի 'ի յերեսս երկրին հայաստանեաց, զի զտցի միաբան թէ կերպարանն թէ երկայնութիւն թէ բարձրութիւն թէ հաստութեամբ ըստ իւրաքանչիւր աստիճանի համեմատ, այսինքն կառն որ ընդունի 'ի վերայ իւր թօփն երկու լիպրանոց, ամենայն կառ այս աստիճանի մի և նոյն կերպարանի, նմանապէս 4 լիպրանոց և վեց լիպրանոց մինչև քառասուն և երկու լիպրանոց, ըստ իւրաքանչիւր երկայնութիւն, լայնութիւն, հաստութիւն, ընկալ Օրինակ 'ի Տեառնէ հրաց զինապետի, և հրամայէ արհեստագործաց պահել հաստատուն 'ի միտս իւրեանց յօրինել կարգիւ և համեմատութեան ըստ իւրաքանչիւր ծանդրութեան թօ-